

# ՍԵՐԳԻՅ ՊԵՏՐՈՎԻՉԻ ՊԱՏՄՈՒԹՅԻՆԸ

Հ. Անդրէեւի

IV.

Սերգէյ Պետրովիչը ապրում էր ընկերութեան սեղանատնից ոչ հեռու չորս յարկանի մի մեծ տան մէջ, որ ամբողջովին քունուած էր տանտիկիններով և ուսանողներով. ունէր մի փոքրիկ, բայց մաքուր սենեակի: Հարեանները խաղաղ և անխում մարդիկ էին, այնպէս որ եւ պարապելու, եւ մոտածելու յարմարութիւն կար, և եթէ մի տհաճ բան կար մէջ տեղը, այդ առաւուները խոհանոցի մշտական ձեռների հոտն էր: Բայց Սերգէյ Պետրովիչը մի կողմ թողեց պարապելը և սենեակը օրուայ կէար դատարկ և մութն էր մնում:

Նա ման էր գալիս չափազանց շատ և նորա երկայն հասակը խունացած գլխարկը հագին կարելի էր տեսնել Սոսկուայի բոլոր փողոցներում: Մի ցուրտ, բայց արև որ նբա մինչև իսկ Վուօրիկի սարը գնաց և այնտեղից երկար ժամանակ դիտում էր վարդադոյն մշուշով և ծխով պարուրուած Մոսկուան, գետի և մարգերի փայլատակող խանձարուրը: Ման գալիս մտածել աւելի հեշտ էր, այն ամենը, ինչ որ տեսնում էր, նորա մտքի աշխատանքը հեշտացնում էր, ինչպէս որ գըրքին կցած պատկերները թոյլ խելքերին օգնում են ըմբռնել ընադիրը: Ինչպէս մի կալուածատէր, որ գգալով կոտը ընկնիլը վերջին անգամ պտտում է իր կալուածքում և ցաւալի հաշիւները մի գումարի բերում: Սերգէյ Պետրովիչն էլ իր հաշիւներն էր մի յայտարարի բերում, որոնք նոյնալիք ցաւալի էին: Ամէն ինչ, որ նորա աչքովն էր ընկնում, վկայում էր, որ նա էլ կաբող էր համեմարար բաղդաւոր լինել, բայց որ երբէք այլ ևս

<sup>1)</sup>Տես «Լումայ» № 1

բաղդաւորութիւն չի տեսնի։ Միայն մի բան կարող էր Սերգէյ Պետրովիչին բաղդաւորեցնել—ձեռք ձգել, ինչ որ կեանքումը սիրում էր և ազատուել ատածիցը։ Նա, չէր հաւատում միշտ կուշա Հարտմանին, որ պնդում էր, թէ փափագածի տիրապետելը իր հետ միշտ յուսախարութիւն է բերում, այլ նովիկովի պէս կարծում էր, որ յոռեատես փիլտրովիայութիւնը ստեղծուած է ամէն բանից զուրկ թշուառ մարդկանց միմիթարելու, խարելու համար։ Նա հաւատացած էր, որ կարող է բաղդաւոր լինել, եթէ փող ունենայ—այդ աշխարհ թափառող ազատութիւնը—որ ստրուկները տէրերի համար են կտրում։

Սերգէյ Պետրովիչը ջանասէր էր, բայց աշխատել չէր սիրում և տանջում էր նորա ծանրութեան տակ, որովհետեւ նորա աշխատանքը հաճելիներիցը չէր։ Գիմնազիօնում նորա աշխատանքն էր, սովորել մի շարք անհետաքըրբական, խորթ, երրեմն էլ բանականութեան ու խղճին ընդդէմ առարկաներ, վերջին դէպքում մանաւանդ աշխատելը սոսկալի էր դառնում։ Համալսարանում գործը աւելի հեշտ էր—հանդիսու ու խելացի, բայց նորա սառն խելին կրկին հաճոյը չէր պատճառում։ Խակ դասերը, որոնք Սերգէյ Պետրովիչը պատահարար ճարում էր, միևնույն զիմնազիական դասերն էին, միայն թարսուած և նոյնքան տածանելի։ Նորա ապագայ գործն էր, իբրև ակցիկ պաշտօնեայի, նոյն անմիտիթար, հլու ձանձրոյթն էր խոստանում։ Սերգէյ Պետրովիչը միայն ամառները հանդպատանում էր, Սմոկինսքում, իրանց տանը, զբաղուելով պարզ և կոպիտ աշխատանքներով։ Նա հիւսնութիւն էր անում. շնում էր փոքր եղբայրների համար. հրացաններ, նետեր, նորոգում էր պարտիզի ցանկապատը, նստարանները. փորում թումբերը. պատշուն փորիչով շուռ տալով փիրուն-փայլուն հողը։ այս շատ ախորժելի, ուրախ աշխատանք էր, բայց այն չէր, ինչ որ նորան վիճակուած էր չնորիչւ իր ծագմանը պաշտօնեայ և օրից և կրթութեանը։ Ուրիշները, որոնք տանջում են իրենց ընդունակութեանց և վիճակուած աշխատանքի անհամապատասխան լինելու պատճառով, երրեմն փշում են իրենց շրջանակը և դառնում, ինչ որ սրտաները տալիս է, բանուոր, երկրագործ, թափառաշրջիկ. բայց դոքա զօրեղ, համարձակ մարդիկ են և այդպիսիների թիւը քիչ է. խակ Սերգէյ Պետրովիչը գգում էր իրեն թոյլ ու երկչուտ մէկը, որ կառավարում է ուրիշի կամքով, ինչպէս մի շոգեկառք, որ միայն

դժբախտ պատահարի ժամանակ գուրս է ընկնում անյայտ ձեռներէ ձգուած երկաթագծերից: Ոչ թէ անել, մինչև իսկ երևակացել էլ չէր կարող, թէ ինչպէս ինքը մի կողմ կթողնէ վայելուչ զգեստը, բնակարանը, դասախոսութիւնները և կոկսէ գըգդգուած շորեւով ճանապարհներին թափառել, կամ թէ գութան անել: Միակ բանը, որ նորան կարող էր ըաղդի արժանացնել — այդ խորթ ու տհաճ աշխատանքից աղատուելն էր: Եւ նա իրաւունք ունէր աղատուելու, որովհետև տեսնում էր, որ ուս րիշները, որոնք էլ իրա պէս կնոջց են ծնուել, ունին նեարդեր, ուղեղ, բոլորովին չէին աշխատում, այլ նուիրւում միայն այնպիսի դործի, որ հաճոք է պատճառում:

Ինչ բանի որ ուրիշները տէր են, ես էլ իրաւունք ունիմ ունենալու, մտածում էր Սերգէյ Պետրովիչը մարդկանց և ընութեան դէմ զրգուած այդ շրջանում: Նա էլ կարող էր գտնել ի հարկէ հաճելի աշխատանքներ և զվասար տեղը կարող էր բանել բնութեան ուսումնասիրութիւնը, ոչ թէ նորա գաղտնիքների խորազնին ուսումնասիրութիւնը, որ խելք է պահանջում, այլ անմիջապէս տեսղութեամբ, հոտուելիքով, բոլոր զգայութեամբ ըմբռնումն: Կենդանի բնութիւնը նա սիրում էր, քնքոյչ, մինչև իսկ բորբոք, բայց խորը թագնուած սիրով: Այդ ենթադրութեամբ գիտէր միայն Նովիկովը: Գարնանը ամեն մի ծիր, բողբոջ, փափուկ հոտաւէտ հողի վերայ աճող թխտենու սպիտակ բունը, նորա փափուկ կրծքին ցցուած աև ու բարակ սստիկները, ամէն ամէնը հրապուրում էին նորա ուշքն ու սիրտը և հրճուանքով լցնում: Նա չէր հասկանում, ինչու այդպէս սիրում է այդ աև հողը, որը այնքան դժբաղդութիւն է բերել իր զիմին: բայց գարնանը երբ առաջին անգամ տեսնում էր երկրի մի մասը սառը մահարեր: ձիւնից ազատ, կարծեսթէ, արեի գիմաց շնչելիս, ցանկութիւն էր զգում համբուրեր զետինը ջերմ քնքոյշ համբոյրով, ինչպէս համբուրում են միայն սիրած կանանց:

Եւ դատապարտուած լինելով ամբողջ կեանքը անցկացնել նեղ քառանկիւնի արկղիկի մէջ, փոշոտ և աղմկալից փողոցներում, քաղաքի կեղտու երկնքի տակ, նախանձում էր նաև թափառաշրջիկներին, որոնց հանգիստը աստղերն են հըսկում և որոնք այնքան շատ բան տեսնում են և գիտեն: Իսկ ինքը ամբողջ կեանքումը չի տեսել և չի էլ տեսնի, բացի թըլտենուց, խոտերից, ոչ խոր գետակներից ու ցածր բլուրներից լուրս

ուրիշ և ոչինչ Պատահում էր, որ նա կարդում էր ծովերի, լեռների գեղեցիկ և հաւանաբար իսկութեանը մօտ նկարագրութիւններ, բայց նորա անզօր երևակայութիւնը կենդանի պատկերներ ստեղծել էր կարողանում: Եւ նա ուզում էր աշքերով սոսուգել, թէ ճշմարիտ արդեօք ծուխն այդպէս անհուն ու անեզզ է, որ նա կապոյտ, կանաչ կամ մինչև իսկ կարմիր է, որ նորա կրծքին խաղում են հակայ ալիքները. իսկ նորա վերեւ-կապոյտ երկնքի դէմքին վազում են սպիտակ կամ սև ու սոսկալի ամպերը: Եւ ուղիղ է արդեօք, որ լեռները այդպէս բարձր են և ուղղաձիգ ու անտառներով ծածկուած, որոնց մէջ մթին են տափս մատախլոտ կրծերը, իսկ մինչև կապուտակ երկնք են հասնում նոյն փայլատակող ձիւնապատ գաղաթները:

Ուղի՞ց է արդեօք:

Փոշոս թոքերի խորքերից արձակուած հառաջ բարձրացնում էր Սերգէյ Պետրովիչի կուրծքը և տափակ դէմքից վանում ամօթիած զմայլուած ժպիտը: Եւ աւելի քան թէ թափառաշրջիկներին նախանձում էր նա այն մարդկանց, որոնց պատկանում են այդ ծովերն ու լեռները:

Մի անգամ, երբ Սերգէյ Պետրովիչը քաղաքում շրջեիս, որոշում էր ամբոխի միջից նոցա, որոնք աղատ են ու իշխող և նոցա, որոնք ընդ միշտ զրկուած են ազատութիւննից, նկատեց ստերէօսկապ պանօրամի ցուցագիր. և ներս մտաւ: Ցոյց էին տափս Լուգովիկոս Բալարացու լեռները, ճները և ամրոցները: Գունաւոր լուսանկարները այնպէս կենդանի և յաջող յաջորդում էին իրար, որ կարելի էր զգալ օդը, կապոյտ հեռուն. իսկ ջուրը պսպղում, փայլում էր, ինչպէս իսկական ջուր, անդրադարձներով իր մէջ անտառները, ամրոցները: Սպիտակ, հանդիսաւոր պայծառ-մաքուր չոգենաւը, փրփուրէ ակօններ էր քաշում ջրի երեսին, իսկ տախտակամածի վերայ կանգնած ու նստոտած էին տօնական զգեստներով տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնց դէմքերին, կարծես թէ կարելի էր նշմարել և ուրախ ժպիտ: Եթեոյ ծեսաւ նա ամրոցը, որ բուրգերով, ատամնաւոր պատշաճամներով անտառների կանաչի միջից, որոնք կասկադներով իջնում էին դէպի հովիտները, սպիտակին էր տափս: Ծեսաւ և ամրոցի ներսը: Հոյակապ դահլիճներ, անթիւ անհամար պատկերներ, ծանր կերպասի ու դիպակի արքայական շքեղութիւնը, գոթական լու

պատուհաններից ներս թափուող և պարկէտ յատակի վերայ ասանող լոյսը: Պատուհաններից մէկի մօտ, մէջը Սերգէյ Պետրովիչին դարձրած, հանգիստ ու անտարբեր նստած էր մի մարդ, և նայում էր դէպի ցած, դէպի այն կողմը, ուր երևում էին միայն լեռների գագաթները ու երկինքը: Սերգէյ Պետրովիչը երկար դիտում էր այդ անշարժ նստած մարդուն և կարծես թէ ինքն էլ տեսնում էր այն բոլորը, ինչ որ նա—անտառները, հովիտները և լճերի կապոյտ պողպատ մակերևոյթը և զգում՝ թէ ինչպէս մաքուր, թարմ է այդ մարդու շնչած օդը և նրան թւում էր, թէ հոյակապ դահլիճներում, որոնք բարձր են, ինչպէս երկնակամարը և պատուհանները այնքան մեծ, որ աշխարհի կէսը կարելի է տեսնել, չի կարող լինել թախիծ և տիսուր մտածմունքներ: Բայց նա տեսաւ ամենադիմաւորը, ամենից աւելի զարմանալին, տեսնում էր նա մի մարդու, որ ծիծաղելի կերպով ոտի մէկը ծալած, կօշկի տակը ցոյց դրած նստել էր և ճիշտ այնպէս, ինչպէս կնստէր նորա տեղ և ինքը Սերգէյ Պետրովիչը ոտի մէկը ծալելով, եւ այդ մարդը շնչում էր լեռնային օդ և կարող էր հոյակապ դահլիճներում զբօնել: Ճասկոտ թախիծի յանկարծակի բունկումով Սերգէյ Պետրովիչը կրնաեցրեց արտամները և յառաջ շարժուեց, կարծես թէ կամենալով այդ անշարժ նստած մարդուն վայր գլորել և ցաւելու շափ ուժով զարկեց քիթն ու յօնքերը ապակու շրջանակին: Այն միտքը, թէ իր բարկութիւնը շինծու է և սպառնում է մի-այն շրջանակի գոյութեանը-ամօթահար արաւ նորան: Որովհեան, եթէ իրօք տեսնէր այդ մարդուն, մատով իսկ շարժել չէր համարձակի: Նա որ երկչու և խաղաղի մէկն էր, և մորթուած հաւի տեսքից էլ սարսուռ զգում, անընդունակ էր և բարկանալու:

Նրը Սերգէյ Պետրովիչը դուրս եկաւ Պանօրամի ընակառանից Մոսկուայի ծուռ ու կոր շեղափողոցը, որտեղից գլուապանները աւլում էին ձիւնը, իսկ կառապանները ստհնականերով հունձում, մտածեց, որ գոյութիւն չունի այնպիսի մի իրողութիւն, որի հետ մարդ պարտաւոր լինի հաշտուել:

Բնութիւնից յետոյ գալիս էին երածշտութիւնը, գեղարուեստը իր բոլոր տեսակներովը, որ չափով որ Սերգէյ Պետրովիչին մատչելի էին և կարող էին նորա կեանքին բովանդակութիւն տալ, հետաքրքրական, բազմակողմանի դարձնել: Ապա գալիս էր կնոջ սէրը, որին այնպէ փափագում էր նորա սիրտը:

Համերգներում, թատրոններում, փողոցներումնա տեսնում էր գեղեցիկ վայելակազմ շնորհակի կանանց և տենչում էր նոցա սէրը: Այդպիսին նա մի քանի անգամ պատահելով արդէն ճանաշում էր և երազում նորա մասին, այն ինչ կինը ոչ մի անգամ ացք չէր ձգում նորան և Սերգէյ Պետրովիչի գոյութիւն ունեցածն էլ զգիտէր: Նորա համար շատ անախորժ էր յիշել այն աղջկայ սէրը, որը դալիս էր նոցա պարահը քաղհանի և որից աղը և քրտնքի հոտ էր փչում: Տհաճութեամբ մոտածում էր նա և ուրիշ նոյնպիսի կոպիտ կանանց մասին, որոնք դեռ կոփեն նորան և կիսուն իւր հետ փողի ու զղուելի աշխատանքի մասին: Անշափ փափազում էր նա յատկապէս այդ կնոջ սիրոյն, որի անունը շդիտէր և որ՝ չի էլ հասկանում այն ամէնը, ինչ որ տանջում է նորան և իր նմաններին: Նա իրք երրէք փող չտեսած մէկը մտածում էր: Թէ փողով կարելի է կնոջ սէրը դրաւել, իսկ իրք կնոջ սիրոյն անտեղեակը—երազում էր թէ սէրը նորան երջանկութիւն կպարգևէ:

Հենց այս ժամանակները Սերգէյ Պետրովիչը գնաց կանանց մօտ, որտեղ պատահեց ընկերներին: Նա դիտմամբ չխմեց որպէս չի աւելի պարզ ըմբռնէ այն, ինչ որ վիճակուած է իրեն և իր նմաններին այս աշխարհում: Սերգէյ Պետրովիչը, որքան աւելի մօտ էր սկսում ճանաչել կեանքը, այնքան աւելի անզօր, չնչին էր թւում նորան իր չնորհքները անմիտ կերպով շուայրող բնութիւնը: Եւ նորա աղօտ աշքերի առաջ նուաստացած բնութեան փոխարէն բարձրանում էր մի ուրիշ ահարկու և զօրեղ ոյժ-փողը: Կուրացած, շշկուած նա սկսեց մտածել, թէ փողը թագաւորում է և բնութեան վերայ: Թոյլ ուղեղը խարուեց և սրտումը նորից վառուեց յոյսը: Գրպանից հանում էր նա արծաթէ դրամը և տարօրինակ հետաքրքրութեամբ ու տարակուսանքով ձեռքում պտտեցնում, կարծես թէ առաջին անգամը տեսնելիս լինէր այդ փայլուն շրջանակը: Սոքա երկնքից չեն ընկնում, նա ձեռք է բերել և կարող է դեռ շատ շատերն էլ ճարել, այն ժամանակ նորա ձեռքում կլինի մի զօրեղ ոյժ, որ իշխում է և բնութեանը: Ինչպէս ամէն մի մարդ, որի մէջ յոյս է ծագել, սկսեց նա մտածել ոչ թէ յոյսի իրականացնելու հնարաւորութեան մասին, այլ թէ ինչ պիտի անէ, եթէ յոյսը իրագործուի: Այդ մի քանի օրը Սերգէյ Պետրովիչի համար հանգստութեան ժամ էր. և նա բարձրացաւ, որպէս զի յետոյ աւելի թափով զարնուի. գետին և էլ չերկենայ: Ենթաղը ել, թէ

ձեռին արդէն միլիօն ունի, և սկսեց երազել ծովի, լեռների և այն կնոջ մասին, որի անունը չգիտէր և որին իր գոյութիւնն իսկ անձանօթ էր:

Բայց մտքերի առաջն առնելին անկարելի է, երբ սկսել են աշխատել և երբ առաջ է քշում այնպիսի մի այրող մտրակ, ինչպիսին գերմարդու տեսիլն է. այն մարդու, որ լիազօր տէր է ոյժի երջանկութեան և ազատութեան: Երբ յոզնած աջերի առջևից անյայտացաւ տեսիլքը, նա զարմացաւ որ էլի առաջուայ նման անձնատուր է լինում անիրագործելի և երեխայական ցնորբների: Հարստանալու միջոցներ շատ կային, բայց ամենքն էլ իրենց խոչ ու խութեն ունէին, որոնց յաղթել Սերգէյ Պետրովիչը անկարող էր: Նա չէր կարող գողանալ, ոչ էլ սպանել, որովհետ ոչ թէ իր ուղեղով, այլ ուրիշի անյայտ կամքովն էր կառավարում: Այն աշխատանքը, որ նորան մատչելի էր, հարստութիւն բերողը չէր, իսկ բոլոր միւս միջոցները-ինչպէս օրինակ քօրային խաղը, գործարանները, մեծ ոռնկով պաշտօն, գեղարուեասը, հարուստ աղջկայ հետ ամուսնութիւնը, այն ամենը, ինչ որ օրէնքն ու խիղճը թոյլ են տալիս և ինչ որ մի օրուայ կամ տարուայ ընթացքում հարստացնում է, նորա համար գոյութիւն չունէին, ինչպէս և խելքը: Եւ երբ Սերգէյ Պետրովիչը հասկացաւ, որ փողը բնութեան անարդարութիւնները ոչ թէ ուղղում, այլ աւելի սաստկացնումէ և որ մարդիկ անխաղճօրէն իրենց հաշիւներն են տեսնում նոցա հետ, որոնց արդէն բնութիւնը հարուածել է, յոյսը տեղի տուեց յուսահատութեան և խաւարը տիրեց նրա հոգուն: Կեանքը նոռքան թուաց իրեւ մի նեղ վանդակ հաստ ու խիս երկաթէ ձողերով, որ միայն մի բաց դուռն ունէր: Եւ այն ժամանակ Սերգէյ Պետրովիչի կեանքում սկսուեց նոր շրջան: Նա տնից դուրս չէր գալիս և լինում էր միայն սեղանատանը և այն էլ գալիս էր գրեթէ փակուելու րոպէին, որպէս զի ծանօթ ուսանողի չպատահէ: Գիշեր ցերեկ նա պարկած էր անկողնում կամ ման էր գալիս սենեակում: Եւ հարևանները և տանտիկինն արդէն սովորեցին միօրինակ քայլերի ձայնին, որ երբեմն կարելի է լսել բանտի խցիկներում: մէկ, երկու, երեք. յառաջ, մէկ, երկու երեք—յետ: Սեղանի գերայ ընկած էր գիրքը, թէն փակ ու փոշոտ, բայց այնտեղից մի ձայն հանդարտ և անողորմ վճռողականութեամբ հնչում էր. եթէ կեանքը քեզ չի յաջողում, եթէ թունաւոր որդում է քո սիրտը, զիացերը, որ մահը կուաջողուի:

## V

Եթէ չի կարելի յաղթել-պէտք է մեռնել: Եւ Սերգէյ Պետրովիչը վճռեց մեռնել, կարծելով թէ մահը նրա համար յաղթութիւն է:

Մահուան միտքը նոր չէր, առաջ էլ այդ մասին մտածում էր նա, ինպէս և ամեն մի մարդ, որ ճանապարհի վերայ արգելքներ կան. բայց այդ միտքն էլ նոյնպէս անպտուղ ու անգործ էր, ինչպէս և միլիոնի ցնորքները: Այդ միտքը այժմ ծագեց իրու և մահը ոչ թէ ցանկալի, որ կարող էր և տեղի չունենալ, այլ անխուսափելի դարձաւ, որ անպատճառ պիտի իրազործուէր: Վանդակից եկը կար, թէս դէպի անյայտութիւն և խաւար, բայց այդ Սերգէյ Պետրովիչը համար անտարբեր մի բան էր: Նա մութը կերպով հաւատում էր նոր կեանքի և չէր վախում, որովհետև միայն ազատ «եսը», որ կախումն չունէ ոչ տկար խելքից, ոչ էլ թոյլ սրտից, իր հետ կտանէ, իսկ մարմինը հողին բաժին կլինի, և թող երկիրը կրկին ստեղծէ նորանից նոր խելք ու նոր սիրու: Եւ երբ զգաց իր մէջ մեռնելու հանգիստ վճռողականութիւն, ամբողջ կեանքումն առաջին անգամ պատեց նորան հպարտ ուրախութիւն, շլթաները վշրող սորկի ուրախութիւն:

—Ես երկու չեմ, ասաց Սերգէյ Պետրովիչը և առաջին գովասանքն էր, որ ինքն իրեն էր տալիս և հպարտութեամբ ընդունում:

Կարելի է կարծել, որ մահուան միտքը կոչնչացնի ամեն մի հոգս կեանքի, մարմին մասին, որը էլ ոչ մի բանի պէտք չէ, բայց Սերգէյ Պետրովիչի հետ հակառակը պատահեց և կեանքի վերջին օրերին նա նորից դարձաւ նոյն իմաստակօրէն ճշտապահն ու մաքրասէրը, ինչպէս որ առաջ էր: Նա զարմացաւ, թէ ինչպէս այդքան երկար ժամանակ իր սենեակը կարող էր թողնել անկարգ վիճակի մէջ և իսկոյն կարգի բերեց սեղանը, հաւաքեց գրքերը, սովորական կարգով դարսեց, և ամենից վերև դրեց կիսամետայ քննութիւնների համար սկսած շարադրութիւնը, որ վերջը նովիկովին մնաց: Իսկ առանձին տեղաւորեց «Այսպէս խօսեց Զարադուստրը»: Նա մինչև իսկ բաց էլ չարեց Նիցչէն, ամենայն սառնասրտութեամբ վերտքերուելով, որը ըստ երևոյթին չվերջացըցեց, որովհետև մատիտով նկատողութիւններ արտած են մինչև երրորդ մասի կէսը:

Գուցէ վախենում էր, որ այնաեղ գտնէ նոր, անսպասելի միքան և այդ կոչնչացնէ նորա ամբողջ երկայն ու սոսկալի աշխատանքը, թողնելով միայն պարզ ու սարսափելի երազի տպաւորութիւն։

Յետոյ Սերգէյ Պետրովիչը գնաց կենդրոնական բաղնիս և առանձին բերկրութեամբ լողաց սառն աւազանում և փողոցումը պատահելով մի ընկեր ուսանողի, մտաւ նորա հետ գարեջրատուն՝ գերմանացուն և խմեց մի շիշ գարեջուր։ Տանը վարդագունած, մաքուր, սպիտակ կտաւէ վերնաշապիկը հագին երկար ժամանակ նստած արքայամորու քաղցրաւենիով թէյ էր վայելում։ Յետոյ տանտիկնոջց խնդրեց ասեղ թել և սկսեց կարկտել ուսանողական տուժուուկան։ Տուժուուկան արդէն հին էր ու նեղ և կոնատակը միշտ պատռում էր։ և Սերգէյ Պետրովիչը քանիցս արդէն կարկտել էր։ Անջնորհք մատներով նա դժուարութեամբ որսում էր ասեղը, որ յաճախ կորչում էր գորշ փտած մահուդի մէջ։ Սերգէյ Պետրովիչը մի քանի օր նուիրեց ցիանիստի կալիի պատրաստելուն և երբ թոյնը արդէն պատրաստ էր, բաւականութեամբ նայեց սրուակին, մտածելով ոչ թէ նորա մէջ պարունակուած մահուան, այլ աւարտուած աշխատանքի մտաին։ Տանտիկինը որ մի փոքրիկ ու սև լին էր և ժամանակով հարճ էր եղել, ըստ երևոյ թին ինչ որ կասկածներ տածում էր, որովհետև շատ ուրախացաւ, երբ Սերգէյ Պետրովիչը սկսեց նորից իր՝ սովորական կեանքին վերադառնալու հակումներ ցոյց տար նա եկաւ Սերգէյ Պետրովիչի սենենակը և երկար ժամանակ խօսում էր այն մասին, թէ որքան վատ է ազդում երիտասարդ մարդկանց վերայ միայնութիւնը և պատմեց իր բարեկամներից մէկի մասին, որ թաղապետ էր և եկամուտի աղբիւրներ ունէր, չնորհիւ իր մուայլ բնաւորութեան սկսեց խմել օղի և վերջը ընկաւ խիտրովիկա և որտեղ այժմ մի բաժակ օղու համար նամակներ, խնդիրներ է գրում։ Այս պատմութիւնը յետոյ նակրկնում էր այցելող բոլոր ուսանողներին և աւելացնում, որ արդէն այն ժամանակ նկատեց ինքը Սերգէյ Պետրովիչի և իր բարեկամի բաղդի մէջ եղած նմանութիւնը։

Եկէք ինձ մօտ թէյի, հրաւիրում էր նա Սերգէյ Պետրովիչըն։ սակայն առանց յետին մտքի, Ընկերներիդ գոնէ զնայիք, թէ չէ ինչի՞ նման է այս—ոչ ձեզ մօտ զալիս է մէկն ու մէկը և ոչ էլ դուք գնում ուրիշին։

Սերգէյ Պետրովիչը լսեց նորա խորհուրդը և այցելեց բոլոր ընկերներին, բայց ոչ մի տեղ երկար չմնաց. Ուսանող ները յետոյ հաւատացնում էին, որ Սերգէյ Պետրովիչը նոր սկսած խելագարութիւնը արդէն այդ ժամանակ պարզ նկատելի էր և զարմանում էին, թէ ինչպէս իրենք աչքից փախցրին: Սերգէյ Պետրովիչը, որ սակաւախօս, մինչև իսկ իր ժանօթ ներից քաշուող մէկն էր, այս անգամ ամէն տնօսակ դատարկ բաներ գուրս էր տալիս, իսկ նովիկովին յիշում էր իրեն հաւասարի և խօսում էր նորա մասին ազատօրէն և մինչև իսկ կշտամբեց նորա վայրիվերոյութիւնը: Բայց այս Սերգէյ Պետրովիչը ուրախ էր և յաճախ ծիծաղում: Մի ջահէլ ուսանող պնդում էր, թէ Սերգէյ Պետրովիչը մինչև իսկ երգում էր, բայց այս արդէն քոլորը չափազանցութիւն համարեցին: Բայց ամենքն էլ միաբերան վկայում էին, որ Սերգէյ Պետրովիչը ինչ որ տարօրինակութիւն անկասկած ցոյց էր տալիս, և եթէ այն ժամանակ այդ խակոյն և եթ չնկատեցին՝ միայն այն պատճառով, որ Սերգէյ Պետրովիչի վերայ ընդհանրապէս ուշադրութիւն քիչ էին դարձնում: Այս ուշադրութեան բացակայութեան առթիւ մի քանիսը, որոնք առանձնապէս խստօրէն դատապարտում էին ընկերների անտարբերութիւնն ու եսասիրութիւնը, հետաքրքիր հարց արծարծեցին.—կարելի էր արդեօք Սերգէյ Պետրովիչին փրկել կեանքի այս վճռողական բովէին—թէ ոչ. և փրկութիւնը միանդամայն հնարաւոր էին համարում, բայց ոչ ուրիշ զօրեղ մտքի ազդեցութեամբ, այլ սրտակից մարդու, մօր, սիրող կոնջ ձեռքով: Ենթադրում էին, որ այդ ժամանակ Սերգէյ Պետրովիչի բթացած հոգեկան դրութիւնը նման էր հիպոնութեական քնի, երբ կամքի վերայ իշխում է բացառապէս ուրիշի կամ իրա միայն մի որ և է միտքը: Այդ մտքի ոյժը դատողութիւններով չէր կարելի կոտրել. բայց սէրը կարսդ էր Սերգէյ Պետրովիչին նորից կեանքի կոչել: Մօր սրտից բղխած ձայնը, նորա դէմքը, որ այնքան սիրելի, անդին է և որի վերայի ամէն մի կնճիռ. մանկութիւնից արդէն ժանօթ է, նորա արտասունքը, որը տանել չի կարող և կոշտացած սիրտը. ահա թէ ինչ կարող էր Սերգէյ Պետրովիչին խելքի բերել: Նա իրեւ բարի և ազնիւ մարդ չէր համարձակի մայրական սիրտը մահով թունաւորել և կապքէր—եթէ ոչ իրա, գոնէ ուրիշների—սիրեների համար: Շատ փոքրոգիների, որոնք արդէն վճռած են եղել մեռնել—փրկել է այն գիտակցութիւնը, թէ նոքա պի-

տանի են սիրելիների, շրջապատողների համար, և նոքա դեռ երկար ժամանակ ապրել են, լաւ ըմբռնելով, որ ապրելն աւելի մեծ քաջութիւն է, քան թէ մեռնելը։ Խոկ աւելի շատ է այնպիսիների թիւը, որոնք մինչև իսկ մուտացել են ինքնասպանութիւնը գործել ստիպող պատճառները և ողբացել կեանքի կարճատեւութիւնը։ Աւելի ևս կատաղութեամբ ընկերները յարձակում էին իրար վերայ և խստորդին կշտամբում իրենց վրդովիցուցիչ անտարերութիւնը։ Նթէ մի հասարակ տասն խօսքից բաղկացած հեռագիր խփուէր Սերգէյ Պետրովիչի մօքը, մի մարդու կեանք կիրկուէր։ Ուսանողներից ոմանք, որոնք սովոր էին հասարակական տեսակէտից նայել ամէն մի խնդիր, այս դէպքն էլ առիթ բռնեցին ուսանողական անմիաբանութեան, ընդհանուր կապող խնդիրների բացակայութեան, տիրող մտաւոր սնանկութեան մասին խօսելու, խորհրդակցելու։ Կարճ ժամանակամիջոցում յառաջ եկաւ մի քանի ինքնական շրջաններ, որտեղ կարդում էին հասարակական խնդիրների վերաբերեալ գրքեր և գրում շարադրութիւններ։

Սերգէյ Պետրովիչը ինքնասպանութիւն գործել վճռեց ուրբաթ վեկտեմբերի 11-ին, երբ ընկերներից շատերը պատրաստում էին տօների արձակուրդներին գնալու։ Այդ օրը առաւտեան նա զնաց պսստի բաժանմունքներից մէկը և այնտեղ յանձնեց ծանր ապահովագրած նամակ նովիկովի հասցէով Սմոլենսք. և ստացած անդորրագիրը դրեց քսակը։ Նամակով նա հաղորդում էր իր մահը և պատճառները. որի մասին նա խօսում էր հատածների բաժանած։ Ամրող նամակը այնպիսի տպաւորութիւն էր գործում, որ կարծես թէ իր մասին չլինէր խօսքը, այլ ուրիշի իրա համար բոլորովին անտարբեր մէկի։ Ցերեկը Սերգէյ Պետրովիչը ճաշեց ընկերութեան սեղանատանը և շատ երկար, նստած սեղանի մօտ, խօսում էր ծանօթների հետ, իսկ ճաշից յետոյ քնեց և նոյնպէս երկար ու կուշտ, այնպէս որ վերկացաւ միայն ժամը մօտ տասն և մէկին։ Բերին ինքնաեռը և ուսանողները պատի յետեից նորից լսեցին մի օրինակ քայլերի ձայնը, մէկ, երկու, երեք յառաջ, մէկ, երկու երեք—յետ նրա արդէն գիշերը ուշ, քնաթոթոր (քնաթաթախ) աղասինը եկաւ ինքնաեռն ու ամանները հաւաքելու, Սերգէյ Պետրովիչը նորան խօսքի բռնեց, կարծես թէ կամենալսվ, որ երկար մնայ և աղասինի ասելովը նա շատ դժգոյն էր։

Սերգէյ Պետրովիչը երբէք չէր սպասում այն, ինչ որ պա-

տահեց իր հետ այդ երեկոյ, որը իր վերջին երեկոն էր համարում նա բոլորովին հանգիստ էր և ուրախ. մահուան մասին էլ չէր մտածում, ինչպէս մինչև այդ ժամանակ: Մահուան մասին մտածել սկսեց նա մրայն թոյն ընդունելուց մի երկու ժամ առաջ: Մտքերը ծնում էին հեռուից, հառ ու կտոր և առ նորոշ կերպով: Սկզբում նա մտածեց տանտիկնոջ մասին, որը վաղը կտեսնէ նորա դիակը և կվախենայ, յետոյ թէ ինչպէս պառկած կլինի և ինչ դէմք կունենայ: Մի բովէ միտքը թռաւ մի ուրիշ կողմ-մանկութեան յիշողութիւններին-այն է իր հօրեղոր մահուան: Հօրեղայը մեռաւ իրանց տանը և Սերգէյ Պետրովիչին, այնժամանակ դեռ եօթը տարեկան Սերեգային վերցրին տարան ծանօթների մօտ: Արդէն հազնուած, նախասենակով անցնելիս նա նայեց դէպի դահլիճը և այնտեղ տեսաւ սեղանը, որի վերայ նոքա ճաշում էին, իսկ սեղանի վերայ հօրեղոր անշարժ ոտների գարշապարները, սպիտակ թելէ գուլբաները հագին: Միայն մի վայրկեան տեսաւ նա, բայց ամրող կեանքումը յիշում էր և մահն էլ երկար ժամանակ պատկերացնում էր միայն մի ձեռով՝ իրեն անշարժ սպիտակ գուլպաները հագին ոտներ: Եետոյ համեմատաբար ոչ հեռու անցեալից յիշեց մի դէպի, երբ նա տեսաւ մի աղքատ և շատ տարօրինակ թաղում: Տարօրինակ էր, որ փողոցի ամբողջ երկարութեամբ ոչ ոք, ոչ անցորդները, ոչ էլ կառապանները ուշաղրութիւն չէին դարձնում և կարծես թէ բոլորովին չէին էլ նկատում, որովհետև ոչ ոք գլխարկ չէր վերցնում: Չորս քեռնակիրներ պատգարակի վերայ դրած տանում էին դադաղը, որ ինչ որ սկ բանով ժածկուած էր, և քայլում էին այնպէս արագ և համաշափ, որ դադաղը օրօրում էր; ինչպէս ալիքների վերայ և ծածկոցի ծայրերը քամու հետ խաղում: Ոչ քահանայ կար, ոչ էլ ուղեկիցներ:

Երբ այս յիշողութիւններից յետոյ միտքը անցաւ իրեն-Սերգէյ Պետրովիչին, զարմանալի սրութիւն ստացաւ, կարծես թէ նոր սրած դանակ լինէր և անշափ պարզուեց, ճշտուեց: դեռ մի վայրկեան նա անվճռողաբար տատանուեց, դիմելով միայն շրջապատող լուռթիւնը, հանգած ինքնառեը, ծոցի ժամացոյցի շխկչխկոցը, բայց յանկարծ, կարծես թէ գտնելով ինչ որ իրեն պէտք էր, արձանացրեց Սերգէյ Պետրովիչի աչքերի առաջ նորա թաղման հանդէսը այնպէս ճշգրիտ, պայծառ և սարսափելի գոյնով, որ նա սոսկաց ու ձեռները թուլացան-սառեցին, նոյնպիսի անողորմ և սարսափելի ճշտութեամբ նորա

միտքը պատկերացրեց մէկը միւսի յետելից և հետեւալ վայրկեանները գերեզմանի ու ու ծուռ փոսը, կարծր ու նեղ դադաղը, համազգեստի կանաչած կոճակները, դիակի քայլայումը՝ Կարծես թէ Սերգէյ Պետրովիչը ինքը շինէր մտածողը, այլ անյայտ մէկի հսկայական ձեռները նորա աշբի առաջից անցկացնելիս լինէին մահն ու կեանքը իրենց աննկարագրելի գոյներով:

Եւ Սերգէյ Պետրովիչը զարթնեց։ Այնպիսի երկիւղ էր զգում նա, որ կամենում էր աղաղակել և սարսափով նայում փոքրիկ սրուակին, յետ յետ գնում, կարծես թէ վախենալով, որ զօռով բերանը շլցնեն այդ մահաքեր թոյնը։ Այդ ըոպէին նա աշխարհումս ամէն բանից աւելի վախենում էր իրանից, ոտների և ձեռների ցոյց տուած սարսափելի անհնազանդութեան պատճառով։ Նա յետ ու յետ էր գնում, այն ինչ ամբողջ մարմինը դողդողում յառաջ դէպի սրուակն էր ձգում։ Ձեռները, տները, բերանը, մինչև իսկ կարծես ոսկրներն ու երակներն էլ կըքով, խելացնոր հրամայող ցանկութեամբ լեցւում բռնկւում էին-յառաջ վազել, առնել սրուակը և բերկրութեամբ-պահութեամբ քամել մինչի տակը։

Զեմ ուզում, չեմ, մրմնջում էր Սերգէյ Պետրովիչը և ձեռներով իրանից վանելով, յետ յետ գնում, բայց նորան այնպէս էր թուում, թէ մօտենում է սրուակին, որն աճում մեծանում էր նորա աշբում։ Եւ երբ դուռը բացուեց, նա իր առաջ արդէն ովինչ չէր տեսնում-կանչեց և մի քայլ առաջ գնաց։

Այդ բոպէին ներս մտաւ աղախինը ինքնաեռն առնելու համար և քնաթաթախ աշքերով վատ տեսնելով շուրջը-երկար ժամանակ հաւաքում էր ինքնաեռն ու ամանները։

«Երբ զարթեցնեմ ձեզ վաղը, հարցրեց նա դուրս գնալիս։

Սերգէյ Պետրովիչը կանգնեցրեց նորան և սկսեց խօսել, բայց ոչ իր հարցերը, ոչ էլ նորա պատասխաններն էր լսում։ Եւ երբ նորից մենակ մնաց, ուղեղի մէջ մեխուեց այդ նախադասութիւնը։ Երբ զարթեցնեմ ձեզ վաղը, և հնչում էր երկար ժամանակ, յամառութեամբ, մինչև որ Սերգէյ Պետրովիչը հասկացաւ նորա բովանդակութիւնը։ Նա հասկացաւ, որ ինքն էր ուրիշների նման կարող է հանուել և պառկել քնելու և վաղը, երբ նոր օր կծագէ, կզարթեցնեն նորան։ Այդ նոր օրը անպատճառ կծագէ և Սերգէյ Պետրովիչը կապրէ, ինչպէս ապէ։

բռւմ են ամենքը, որովհետև նա չի ուզում մեռնել և չի էլ մեռնի, և ոչ ոք չի կարող ստիպել նորան առնել սրուակն ու խմել: Դեռ ևս դողդողալով վերցրեց արուակը, դիտմամբ խցանը հանեց, հոտոտեց նուշի դառն հոտը և կրկին դողդոջիւն ձեռքով դրեց դարակի վերայ, որտեղ գրքերի յետեկից չէր նկատում: Այժմս, երբ սրուակը ձեռքն առաւ և չմեռաւ, նա այլ ևս չէր վախենում ոչ իրանից, ոչ էլ սրուակից:

Երբ Սերգէյ Պետրովիչը անկողին մտաւ, նորան թւում էր, թէ վերմակի տակ ջերմացած մարմնի ամենափոքրիկ մասնիկն էլ անշափ ուրախ է կեանքի փրկուելուն: Նա ձգում էր ոտները, ձեռները, որոնք թէ էր մնում, որ ոճիր գործէին, և թւում էր թէ նոցա մէջ մի ինչ որ բան ուրախ շշուկով մեղմ, քաղցր երգում է, կարծես թէ արիւնը հրճում, երգում էր, որ չմակարդուեց ու չնեխեց, այլ ուրախ ու կարմիր հոսում է լայն ու ազատ ճանապարհներով: Այսպիսի հրճուանքով նա լեցնում էր և սիրտը և որը նոյնպէս ցնծութեամբ նորա հետ միասին երգում, կեանքին օրհնարգ էր կարդում:

Կեմնք, կեանք, մտածում էր Սերգէյ Պետրովիչը, բաց ու խուփ անելով իր ճկուն մատները: Թող նա դժբախտ հալածուած, զրկուած լինի, թող ամենքն արհամարհեն նորան, ծաղր ու ծանակ անեն, թող նա մարդկանց մէջ ամենայետինը, ոչնչութիւն լինի, փնչի, որ ոտներից թափ են տալիս, բայց նա պիտի ապրէ, ապրէ. նա պիտի տեսնէ արևը, չնչէ, բաց ու խուփ անէ իր ճկուն մատները, նա պիտի ապրէ ապրէ... ապրէ... Եւ սա ինչպիսի երջանկութիւն, որպիսի բերկրանք է, որը նորանից խել ոչ ոք չի կարող և որը պիտի տեսէ երկար ու երկար... Միշտ, Անթիւ ու անհամար օրեր առաջին վառում են իրենց արշալոյսը և ամէն օր նա ապրում է, միշտ ապրում: Շատ օրերից յետոյ առաջին անգամ Սերգէյ Պետրովիչը լիշեց իր հօրն ու մօրը և սարսափեց և զգացուեց: Մաքով համբուրում էր նա այն կնճիռները, որոնց վերայից պիտի հոսէին արտասունքները և նորա սիրտը բեկրեկուում էր յաղթութեան բերկրալից ձայնից. ապրնամ եմ ապրնամ եմ: Եւ երբ հանդիսաւ ու ուրախ քնեց-նորա վերջին ըզգայութիւնն էր շրթունքները թրջող արտասուքի աղի համը:

Օրը ցուրտ էր և արեւ փայլում, երբ Սերգէյ Պետրովիչը զարթնեց: Երկար ժամանակ նա չէր հասկանում, թէ ինչու

անկողինը ձգած է, ինչպէս միշտ և ինքն էլ կենդանի, պառկած-այն ինչ երեկ նա մեռած պիտի լինէր: Գլուխը մի քիչ ցաւում էր և ամբողջ մարմինը ջարդութւում մղկառւմ, ինչպէս խիստ ծեծից յետոյ: Հետզհետէ մէկ առ մէկ յիշեց այն ամենը, ինչ որ երեկ նորա մտքովն անդել էր և չէր հասկանում, թէ ինչու նա այդպէս խիստ վախեցաւ. և ինչ կար վախենալու. չէ որ այդ ամենը նորան միշտ էլ յայտնի էր և հազար անգամ էր պատկերացրել իրեն մահ, թաղումն, գերեզման: Հապա ինչպէս է լինում այլ կերպ, երբ մարդ մեռնում է: Ի հարկէ նորան կթաղեն, դորա համար էլ գերեզման կփորեն. իսկ գերեզմանի մէջ դիակը քայլայում է: Մէկ էլ նա ուշադրութեամբ և տարակուսանքով քննեց երեկուայ մտածմունքները. երեակայածները, բայց սոքա բոյորովին դժգոյն ու խաւար էին և քանի գնում աւելի աղօտանում ինչպէս երազներ, որոնք արթնութեան առաջին բոպէներին այնքան պայծառ են լինում, բայց նոյնպէս էլ շուտ անհետ ջնջում են իրականութեան և օրուայ տպաւորութիւնների առաջ: Նև մահուան պատկերը ամեննեին սարսափելի չէր-իսկ կեանքը հրճուանքը անհասկանալի և վայրենի էր թւում:

Եւ իրեկ լուծումն այս ամենի յանկարծ նորա մտքովն անցաւ եթէ Սերգէյ Պետրովիչը երկյու ու սնապարծին մէկն է:

Նա յիշեց նովիկովի գրած նամակը, որով հաղորդում էր իր մահը, իրեկ արդէն կատարուած իրողութիւն և ամօթից շառագունեց ու զգաց, որ մեռնելու գճիոը նոյնքան հաստատ ու անդառնալի է, որքան և երեկ, երբ դեռ փոքրոգի ու անհասկանալի երկիւղի ազգեցութեան չէր ենթարկուել: Նրկիւղն անցաւ, բայց ամօթի այրող զգացումը մնում էր գեռ և Սերգէյ Պետրովիչը տանջուած հոգու բոլոր կարողութեամբ յուզում էր անյայտացած երկիւղի, ստրկի երկար ու ծանր շըդթայի, այդ ամենախայտառակ օդակի դէմ: Այն անսիրա կոյր ոյժը, որ Սերգէյ Պետրովիչին ոչնչութեան անյայտ խորքերից լոյս աշխարհ էր բերել, վերջին փորձն էլ փորձեց շղթայել նորան, ինչպէս մի երկյու փախստականի. և թէն միայն մի քանի ժամ, բայց և այնպէս յաջորեցրեց: Նոր ոյժով բունկունց կիզիչ ամօթը և իր բոցով վայրկենական երկիւղի յիշտատակն անգամ մոխիր դարձրեց: Երբ հրդեհը հանգաւ, անյայտացաւ և մարմնի բութ մղկացը և կարծես անշօշափելի, անդգալի դարձաւ: Դադարեց և գլխի ցաւը և ուղեղը սկսեց

գործել այնպէս արագ, պարզ և զօրեղ կերպով, ինչպէս աշխատում է միայն տենդի ժամանակ: Խօսելու ցանկութիւնից վրթունքները գողդողում էին և բերանն ին գալիս այնպիսի խօսքեր, որոնք Սերգէյ Պետրովիչը երբէք ոչ գործածել ոչ էլ գիտէր: Նա ասում էր, որ եթէ այժմ կենդանի մնայ, կականքն իրեն ատել և ստիպուած կլինի խմել ինքն արհամարհանքի մի այնպիսի վկա բաժակ, որի մօտ թոյնը նեկտար կերկի: Նորա եսը, այն անկտիս և ազնիւ եսը, որ մի վայրկեան իրեն յաղթող զգաց և արի հոգու կոյր ու բռնակալ մարմնի դէմ տարած յաղթութեան անսահման ուրախութեամբը համակեց, կսպանէ նորան, եթէ միայն թոյնը չտեսնէ իր գործը: Եւ Սէրգէյ Պետրովիչին այնպէս թուաց, թէ զգում է իր մէջ այդ զօրեղ եսի զարթնելը, զգում է թէ ինչպէս նա անում, բարձրանում է և նորա որոտընդոսա ձայնը խլացնում է միայն գիշերները զօրեղ մարմնի ողորմելի ճիշ: Թող կորացնէ մէջը, ով ուզում է, բայց նա կփշէ իր երկաթէ վանդակը: Եւ այդ ողորմելի, բթամիտ և դժբախտ մարդը իրեն հանճարներից, թագաւորներից, լեռներից բարձր է զգում-վեր երկրի բոլոր բարձրութիւններից, որովհետեւ նորա մէջ յաղթանակում է աշխարհիս ամենամաքուր; ամենագեղեցիկ բանը-մարդկային քաջ, ազատ և անմահ եսը, որին չեն կարող ոտի տակ տակ ընութեան կոյր ոյժերը. նա թագաւորում է կեանքի և մահուան վերայ: այդ քաջ, ազատ և անմահ եսը:

Այն, ինչ որ Սերգէյ Պետրովիչը զգում էր այդ ռոպէին, նման էր մեծութեան ցնորդի, հպարտ և անմիտ բարբաջանքի, ինչպէս կարծում էին նորա նովիկովին ուղղած երրորդ նամակի կարդացողները, որից կտորներ մենք մէջ բերինք (?): Նովիկովին նա զբեց չհագնուած, մի թղթի կտորի վերայ, որ ինչպէս յետոյ երևաց, լուացարարի հաշիւն էր: Այս գիրը Նովիկովի ձեռքն ընկաւ ոստիկանատանը և հաշտարար դատաւորի մօտ շատ թափառելուց յետոյ տեղն ու տեղը սեղանի մօտ կանգնած նա խմեց թոյնը և երբ աղախինը եկաւ ինքնաեռն առնելու, Սերգէյ Պետրովիչը արդէն գիտակցութիւնը կորցրել էր: Թոյնը, ինչպէս յետոյ պարզուեց, անփորձ ձեռներ էին պատրաստել և թոյլ. ուստի կարողացան Սերգէյ Պետրովիչին գեռ կենդանի հասցնել նկատերինեան հիւանդանոցը, որտեղ և երեկոյեան դիմաց մեռաւ:

Սերգէյ Պետրովիչի մօրը խփուած հեռագիրը ուշացաւ նորան կանչող ուսանողները կարծում էին, որ լաւ էլ եղաւ, որ ուշացաւ, որովհետև Սերգէյ Պետրովիչը դադաղի մէջ բացուած, դատարկ գանգով և բժաւոր դէմքով շատ վատ տեսք ունէր, մինչև իսկ սարսափելի ու խիստ ծանր տպաւորութիւն կարող էր գործել նև մայրը որդու փոխարէն գտաւ միայն նորանից մնացած գրքերը, հնացած զգեստները, որոնց թւում և մաշուած տուժուրկան կռան տակի պատռուածքը նոր կարկտած:

Պ. Ս. ԶՈՒՐԱՐԵՍԱՆՑ

---